Տեղեկություն

Հարցում 1. 2016 եւ 2017 թվականների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների տարեկան վիճակագրությունների հրապարակման աղբյուրները (էլեկտրոնային հղումները):

ա) 2016 թվականի ընթացքում ՀԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարան հասցեագրվել է տեղեկություն ստանալու 15 հարցում, որոնց պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետում: Այդ մասին հրապարակումը տեղադրվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում: Հղում՝ http://vdzor.mtad.am/files/docs/23550.pdf, (երկրորդ էջի վերջին պարբերություն):

բ) 2017 թվականի ընթացքում ՀԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարան հասցեագրվել է տեղեկություն ստանալու 13 հարցում, որոնց պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Հղում՝ http://vdzor.mtad.am/files/docs/31039.pdf, (երկրորդ էջի վերջին եւ երրորդ էջի առաջին պարբերություններ):

Հարցում 2. 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության հրապարակման աղբյուրը (էլեկտրոնային հղումները):

2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում ՀԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարան հասցեագրվել է տեղեկատվական 10 հարցում, որոնց պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

ՀՀ ՎՁ մարզպետարանին ուղղված տեղեկություն ստանալու հարցումների մասին ամբողջական տեղեկությունները (հարցումը և պատասխանը), սկսած 2016 թվականից, զետեղված են ՀՀ ՎՁՄ պաշտոնական կայքի <<Դիմեք մեզ եւ տեղեկատվության ազատություն>> բաժնի, <<Տեղեկություն ստանալու մասին հարցումների վիճակագրություն>> ենթաբաժնում: Հղում՝ http://vdzor.mtad.am/Teghvits/

Իսկ 2018 թվականի ընդհանուր տվյալների մասին տեղեկությունը կտեղադրվի 2019 թվականի հունվար ամսվա աշխատանքային առաջին շաբաթվա ընթացքում:

Հարցում 3. 2016, 2017 թվականների և 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում ձեր գերատչությանը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմողներից քանի՞սն են եղել քաղաքացի, քանի՞սը՝ ՀԿ և քանի՞սը՝ լրագրող: Խնդրում ենք տվյալները տրամադրել առանձնացված՝ ըստ նշված ժամանակահատվածների:

2016 ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարան հասցեագրվել է տեղեկություն ստանալու 15 հարցում, որոնցից 4-ը՝ լրագրողներից, 2-ը՝ քաղաքացիներից, 9-ը՝ հասարակական կազմակերպություններից:

2017 ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարան հասցեագրվել է տեղեկություն ստանալու 13 հարցում, որոնցից 8-ը՝ լրագրողներից, 5-ը՝ հասարակական կազմակերպություններից:

2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարան հասցեագրվել է տեղեկություն ստանալու 10 հարցում, որոնցից 5-ը՝ լրագրողներից, 5-ը՝ հասարակական կազմակերպություններից: